



Ագրաբարություն Trumpet's Sound **փող**

51-րդ ՏԱՐԻ, ԱՄՏՐԱԼԻԱ
ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵՆ ՓՈՂ»
երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույումեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



ARMENIAN CHRISTIAN MISSION

Բովանդակություն

.....	3
Հովիւ՝ Հրաչ Գույումեան	
» »	4
Անժէլայ Յարութիւնեան	
.....	7
Տոն Սրորմբր	
Պ» »	9
Գառնիկ Արքեյան	
»	12
Յակոբ Ժաք Խաչոյեան	
14«000	13
Դաւար Խաչոյեան	
» »	15
ԱՍՄ	

Կազմի նկարը՝ Հոկտեմբեր 2020,
Արցախի պատերազմ:

Կը խնդրենք աղօթել.

- Հայաստան ապաստանած շատ փախստականներու համար,
- սգաւորներու համար,
- վիրաւորներու համար,
- զրկուած մանուկներու համար,
- այրիներու եւ որբերու համար,
- սնունդի եւ հագուստի շաբաթական բաշխման համար,
- համաճարակով վարակուածներու համար,
- երկրի համար, որպէսզի այն հանգիստ գտնէ,
- Ժողովուրդի համար, որպէսզի խաղաղութիւն գտնեն,
- Կառավարութեան իմաստութեան համար:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

Արցախ

Ո՞վ կրնայ հասկնալ իմ ցաւ:

Քալեցի անոր փողոցներով, գիշերներ անցուցի Արցախի հայերուն հետ, խմեցի անոնց ջուրն ու կերայ անոնց կերակուրը: Ծիծաղեցի երիտասարդներուն հետ ու լաց եղայ ծերերուն հետ: Միասին աղօթեցինք եւ Աստուծոյ երկրպագեցինք: Ես կը հասկանամ, թէ ինչ կը նշանակէ հայրենի երկրէն հեռանալ, ետին թողնել տունը ու անոր հետ կապուած իրաքանչիւր յիշողութիւնը:

Այս վերքը բաց է, խորունկ է եւ սպիները երկար ժամանակ պիտի մնան: Մարդիկ կը սգան, կուլան, կը բողոքեն, որ այսպէս պէտք չէր ըլլար: Անոնք կը հարցնեն, թէ արդեօ՞ք կայ մէկը, որ կրնայ իրենց ցաւը հասկնալ: Անոնք ցերեկ ու գիշեր ցաւի մէջ են, կա՞յ մէկը որ կրնայ իրենց օգնել: Անոնք կորսնցուցած են իրենց յոյսը, իրենց ուրախութիւնը եւ խաղաղութիւնը: Անոնք զայրացած են, վիրաւորուած են եւ իրենք իրենց դաւաճանուած կը զգան:

Սակայն Աստուած կը սիրէ բոլոր մարդկութիւնը: Ան կը սիրէ ձեզ եւ Իր արցունքները կը թափէ ձեզ համար այսօր: Միայն Ան կը հասկնայ, միայն Ան հոգ կը տանի, միայն Ան կարող է սրբել ձեր արցունքները: Ան այդպէս պիտի ընէ, եթէ պարզապէս մօտենաք Իրեն ու Իր մէջ հանգստանաք, մնաք Իր կողքին ու թողէք, որ Ան գրկէ ու մխիթարէ ձեզ: Գացէ՛ք եւ պատմէ՛ք Իրեն ձեր ցաւի մասին, ցո՛յց տուէ՛ք վերքերը եւ Ան ցոյց պիտի տայ Իր վերքերը, եւ հանգիստ ձայնով պիտի ըսէ ձեզի. «Կը հասկնամ»:

Դուք գիտէք, որ եթէ չխնամէք այս վերքը, ապա այն պիտի վարակուի ու ձեզ համար լուրջ խնդիրներ ստեղծէ: Ամէն բան աղօթքով Տիրոջը տարէ՛ք: Խնդրէ՛ք Իրեն բուժել ձեզ ու հեռացնել այդ ցաւը: Միայն Յիսուսը կրնայ այդ ընել, միայն Ան կրնայ մխիթարել ու բուժել կոտորուած սիրտը, միայն Ան կրնայ վերականգնել ու կրկին առողջացնել՝ ֆիզիկապէս ու հոգեպէս:

Ընտրութիւնը ձերն է. կա՞նք կը շարունակէք նայիլ ձեր վերքերուն ու թոյլ տալ, որ ցաւը կործանէ ձեր օրը, կա՞նք կը վերցնէք ձեր խնդիրները

ու Տիրոջը առջեւ կը ներկայանաք: Թողէ՛ք ձեր ցաւերը Անոր ոտքերուն քով եւ թո՛յլ տուէք, որ Ան զբաղուի ատոնցմով:

Ամենագեղեցիկ խօսքը, որ Յիսուս նախքան Իր համբարձումը Իր աշակերտներուն ըսաւ սա էր. «Իմ խաղաղութիւնս կուտամ ձեզի»: Սա է ձեզ անհրաժեշտ դարմանը. Յիսուսին ունենալ ձեր սրտին մէջ: Դուք Իր խաղաղութեան կարիքն ունիք, որպէսզի ձեր վերքերը բժշկուին եւ ձեր սիրտը նորոգուի: Երբ ստրվիք ձեր սրտէն վիրատրանքն ու ատելութիւնը հեռացնել, այդ ժամանակ ուրախութիւնը պիտի գայ եւ շուտով պիտի սկսիք երգել նոր երգ մը, քանի որ հինը անցաւ, եւ ամէն բան նոր պիտի ըլլայ:

Ասոր համար Յիսուս եկաւ: Ան եկաւ, որպէսզի կեանք ունենանք եւ այն լիովն ունենանք: Վեր կացէք եւ փնտռէ՛ք Իր մաքրութիւնը: Այդ ժամանակ յաղթական պիտի ըլլաք, քանի որ մեր յաղթութիւնը Քրիստոսի մէջ է:

Հ. Գ.

Մեր սերունդի ամէնատխուր աշունը

2020 թուականի Սեպտեմբեր 27, կը թուար թէ տարուայ հերթական օրերէն մէկը պիտի ըլլար: Սակայն... ուղեկցող խաղաղութիւնը վերածուեցաւ անխաղաղութեան, ժպիտը վերածուեցաւ լացի, ուրախութիւնը՝ տխրութեան, մանկան անհոգութիւնը՝ վախ ու սարսափի, հարազատին կորսնցնելու տագնապի...

Պատերազմ, որն անվերջ ու անլուծելի կը թուայ... Սկսաւ հերթական պատերազմը Հայ ազգի՝ Հայաստանի եւ Արցախի հայութեան նկատմամբ: Թշնամիի հերթական ահաբեկչութիւն՝ Հայ ազգը ոչնչացնելու ու երկրի երեսէն բնաջնջելու նենգ ծրագիրով:

Հայաստանի եւ Արցախի հայերը կրեցին մարդկային, տնտեսական եւ ֆինանսական կորուստներ: Զոհուածներու թիւն անցաւ չորս հազա-

րի սահմանը, բազում ընտանիքներ զրկուեցան իրենց տան ճրագէն՝ հայրեր, որդիներ: Դպրոցներու եւ մանկապարտէզներու մեծ մասն աւերուած են, հիւանդանոցներն ու ծննդատուները ռմբակոծուած են: Անաստուած ահաբեկիչներու ձեռագիր է սա:

Աշխարհի տարբեր անկիւններէն հայերը միաբանուեցան՝ իրենց լաւագոյնն ընելու. օգնելու ՀԱՅ-ին: Սփիւռք, պետական հաստատութիւններ, կազմակերպութիւններ, հիմնադրամներ, անհատ ձեռներէցներ եւ սովորական քաղաքացիներ համախմբուեցան մէկ հարցի շուրջ՝ աջակցելու առաջնագծին պատերազմող զինուորին, Արցախէն Հայաստան ապաստանած մայրերուն ու զաւակներուն, տարեցներուն: Եւ որ ամենակարեւորն է քրիստոնէայ հաւատացեալ եղբայրներն ու քոյրերը համախմբուեցան առ Աստուած աղօթքներ բարձրացնելու մէջ:

«Հայ քրիստոնէական առաքելութիւն» հիմնադրամը նոյնպէս օգնութեան ձեռք մեկնեց պետական հաստատութիւններուն՝ տրամադրելով անհրաժեշտ պարագաներ, ինչպէս նաեւ մեզ դիմող արցախահայութեանը: Մինչ օրս մեզ դիմած են հինգ հազարէն աւելի արցախահայ ընտանիքներ՝ աջակցութիւն ստանալու նպատակով: Տրամադրած ենք մեծահասակի եւ մանկական տաք հագուստ, գործուած ծածկոցներ, սննդամթերք, գրեմական պիտոյքներ եւ այլ անհրաժեշտ պարագաներ: Յանկացողներուն նուիրած ենք Աստուածաշունչ, քրիստոնէական գրականութիւն: Նաեւ իրենց կողքին եղած ենք Աստուծոյ խաղաղութիւնը, սէրը, ողորմութիւնն ու հոգատարութիւնն առատօրէն բաժնեկցելու մեծ առանձնաշնորհմամբ:

Պատերազմի սկզբնական շրջանին շատ կանայք եւ մայրեր մեծ հոգեբանական աջակցութեան կարիք ունէին, քանի որ տագնապի ու անորոշութեան մէջ էին՝ իրենց ամուսիններէն ու որդիներէն լուր չունենալու պատճառով: Անհամբերութեամբ եւ անհանգստութեամբ կը հետեւէին լրատուական միջոցներուն, որպէսզի տեղեկութիւն ունենային անոնցմէ եւ նաեւ իրենց բնակարաններէն: Ծատեր կուգային եւ անհանգստացած կը պատմէին, որ կորսնցուցած են իրենց բնակարանը, հողամասը: Կը պատմէին զոհուած եղբայրներու, հայրերու մասին: Մանուկները կը հրաժարէին խաղալիք վերցնել ու կ'ըսէին, թէ կ'ուզեն միայն իրենց հայրերուն տեսնել, գրկել: Որոշ մանուկներու մօտ վախի ազդեցութիւնէն խախտուած էր ֆիզիոլոկիական եւ տարիքային զարգաց-

ման նորմալ ընթացքը: Շատ մեծ մայրեր եւ մեծ հայրեր՝ չդիմանալով այս մեծ ցաւին, կեանքէն հեռացան:

2020 թուականի նոյեմբեր 10-ին կնքուեցաւ խաղաղութեան պայմանագիրը, որը ցնցեց ամբողջ աշխարհի հայութեանը: Յանձնել թշնամիին հողերը: Բազմաթիւ արցախցիներ ստիպուած եղան լքելու իրենց բնակարանները, հողը, հայրենիքը: Շատերն իրենց իսկ ձեռքերով այրեցին իրենց տունները: Ազրայէճանի կողմին մնացին պատմամշակութային բազում շինութիւններ, եկեղեցիներ:

Յաւր մեծ է, չպատասխանուած շատ հարցեր կան, շատ հայորդիներ դեռ չեն գտնուած, ծնողներն ու հարազատները չեն գիտէր արդեօք ո՞ղջ են, թէ՞ զոհուած են: Անխաղաղ է քաղաքական դաշտը...

Լուծումն անհնարին կը թուայ. անհնարին մարդու համար, բայց ոչ Աստուծոյ համար: Մեր Աստուած հզօր, ողորմած, բարի ու անաչառ է: Շարունակական աղօթքներու անհրաժեշտութիւնը մեծ է: Անհրաժեշտ է շատ աղօթել, աղօթել ճշմարիտ խաղաղութեան, հոգիներու փրկութեան, Աստուծոյ աւելի քան երբեւէ վստահելու համար: Աստուած օգնական բոլորիս:

Տիրոջ քով կայ մխիթարութիւն, յոյս, խոստում, սէր, ողորմութիւն, շնորհք... «Տէրը այսպէս կ'ըսէ. «Քու ձայնդ լալէն եւ աչքերդ արցունքէն դադրեցո՛ւր: Վասն զի քու գործիդ համար վարձք կայ ու թշնամիին երկրէն պիտի դառնան»» (Երեմիայ 31:16):

Ամենայն Յարութիւնեան



Կը շնորհաւորենք մեր ընթերցողներուն Տէր Յիսուս Քրիստոսի ծնունդի կապակցութեամբ ու կը մաղթենք, որ 2021 թուականը օրհնեալ տարի ըլլայ բոլորիդ համար: Նաեւ կը փափագինք, որ գալիք տարին ըլլայ Տէր Յիսուսի երկրորդ գալստեան տարին:

Խաղաղութիւն

Շատ հարցեր կան, որոնք անընդհատ կուտանք մեզ շրջապատող իրարանցումի ժամանակ: Ի՞նչ է խաղաղութիւնը: Արդեօք այն պարզապէս պատերազմի բացակայութիւնն է: Արդեօք այն կապ ունի շրջապատող իրավիճակի՞, թէ՞ մեր ներքին զգացումներու հետ: Երկրորդ համաշխարհային պատերազմի աւարտէն ետք 1945 թ.-ին, աշխարհի շատ երկիրներու մէջ գործօն մարտեր չեն պատահած: Բայց արդեօք սա՞ է ճշմարիտ խաղաղութիւնը:

Մենք այս աշխարհի մէջ խաղաղութիւն կը փնտռենք: Շատ երկար ժամանակ իրարու հետ վիճած ենք: Կը յիշենք Տէր Յիսուսի ծննդեան պահին հրեշտակներու բերած պատգամը. «Երկրի վրայ խաղաղութիւն, մարդկանց մէջ հաճութիւն»: Հարց կուտանք, թէ արդեօք երբեւէ պիտի գա՞յ այդ ժամանակը: Այո՛, պիտի գայ: Բայց նախ անհրաժեշտ է արմատական փոփոխութիւններ կատարել: Այս աշխարհի վրայ ճշմարիտ եւ տեւական խաղաղութիւն պիտի ըլլայ միայն այն ժամանակ, երբ Տէր Յիսուսը վերադառնայ այս աշխարհ եւ հաստատէ Իր Հազարամեայ թագաւորութիւնը:

Մեզ շրջապատող եղելութիւններուն նայելով պէտք է յիշենք Տէր Յիսուսի զգուշացումը, թէ պատերազմներ ու պատերազմներու լուրեր պիտի լսենք նախքան ամէն ինչի վերջը: Մարդու սիրտն այնքան չար է, որ չենք կրնար երկարատեւ խաղաղութիւն ակնկալել այնքան ժամանակ, քանի դեռ Տէր Յիսուսը չի դեկավարել: Այնուամենայնիւ, մեր շուրջը ստեղծուած իրավիճակները պէտք չէ մեզ յուսահատութեան տանեն: Պօղոսը մեզ պատուիրեց թագաւորներու, իշխանաւորներու եւ բոլոր մարդկանց համար աղօթել, որպէս զի խաղաղ ու հանդարտ կեանք վարենք կատարեալ աստուածաշնորհութիւնով ու պարկեշտութիւնով (Ա Տիմ. 2:2): Մենք կ'աղօթենք կառավարութիւններու եւ խաղաղութեան համար, որպէսզի կարողանանք հաւատարմօրէն ապրել Աստուծոյ առջեւ ու շարունակել մարդկանց վկայել:

Աւելի վաղ հարցուցինք, թէ արդեօք գործօն մարտերու աւարտը խաղաղութիւն կարելի է համարել: Ոչ այդքան: Մենք բնագոյրէն կը զգանք, որ խաղաղութիւնն աւելին է, քան գործօն ռազմական գործողութիւններ:

րու կամ ատելութեան ատարտը: Մեծ մասամբ մենք մեզ հանգիստ չենք զգար: Մեր վերաբերմունքի եւ դիրքորոշման մէջ անհանգստութիւն կայ: Ասոր պատճառն այն է, որ խաղաղութիւնը ներքին իրողութիւն է: Մեր մտքերն ու սրտերը պէտք է խաղաղ ըլլան: Ճշմարիտ խաղաղութիւնը մեր անձնական կեանքի ներքին հանգստութիւնն է, այնպէս որ ուր ալ ըլլանք՝ մենք խաղաղութեան մէջ կ'ըլլանք: Եթէ խաղաղութիւն կայ, ապա հանգիստ ու հանդարտ կ'ըլլանք ու շրջապատի վտանգի զգացում չենք ունենար: Այդ ժամանակ խաղաղութիւնը կը հաստատուի, թէ՛ մեր մէջ եւ թէ՛ մեզ շրջապատող իրավիճակներուն մէջ:

Խաղաղութիւն Աստուծոյ հետ

Չնայած որ արդարացի է այս աշխարհի մէջ խաղաղ ապրելու մեր փափագը, սակայն շատ ատելի կարեւոր է այն, որ Աստուծոյ հետ խաղաղութիւն ունենանք: Պօղոսը գրեց, որ հաւատքով արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տիրոջը Յիսուս Քրիստոսին ձեռքով (Հռովմ. 5:1): Մենք, հաւատացեալներս, գիտենք, որ կար մի ժամանակ, երբ Աստուծոյ թշնամի էինք: Մենք Անոր դէմ ապստամբած մեղաւորներ էինք: Բայց երբ հաւատացինք Տէր Յիսուսին, մեր մեղքերը ներուեցան մեզի եւ անմիջապէս խաղաղութիւն հաստատուեցաւ Աստուծոյ հետ: Սա փորձառութիւն մըն է, որը կարող ենք ունենալ այստեղ եւ հիմա: Մենք չենք սպասէր մահուանը, որպէսզի պարգենք, թէ արդեօք Աստուած ընդունէր է մեզ:

Փիլիպպէի եկեղեցիին գրելով՝ Պօղոսը 4:7-րդ համարին մէջ խօսեցաւ Աստուծոյ խաղաղութեան մասին, որը ամէն մտքէ վեր է, որը կը պաշտպանէ մեր սրտերն ու մտքերը Քրիստոս Յիսուսով: Իր օգտագործած բառը կը յուշէ կայազօրի կամ պահապանի մասին, որը կը հսկէ մեր կեանքի իւրաքանչիւր ոլորտ: Իր մէջ գտնուիլը նման է ամրոցի մէջ գտնուիլ, որտեղ պահուած կ'ըլլանք ապահովութեան եւ սրբութեան մէջ:

Աստուծոյ՝ ամէն մտքէ վեր եղող խաղաղութեան մասին խօսելէն ետք Պօղոսը խօսեցաւ խաղաղութեան Աստուծոյ մասին: Ան իր ընթերցողներուն յիշեցուց, որ եթէ անոնք ընեն իր տրվեցուցածները (եւ որոնք տեսան իր կեանքի մէջ), ապա խաղաղութեան Աստուծոյ իրենց հետ պիտի ըլլար (Փիլիպ. 4:9): Պօղոսը ատելին կ'ըսէ Բ Կորնթ. 13:11-ի մէջ.

«Վերջապէս, եղբայրներ, ո՛ղջ եղէք, հաստա՛տ կեցէք, մխիթարուեցէ՛ք, միաբան եղէք, խաղաղութիւն ըրէք եւ սիրոյ ու խաղաղութեան Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ»:

Աստուծոյ հետ Խաղաղութիւն ունենալը հնարաւոր է, եթէ ունինք Աստուծոյ խաղաղութիւնը, որը կուգայ խաղաղութեան Աստուծմէ: Այս ներքին հանգստութեանը բոլորս կարիք ունինք: Այն ներքին խաղաղութեան զգացում է, որը Աստուծոյ Հոգին կը բերէ մեզ: Մենք գիտենք, որ այդ խաղաղութիւնը մեր բաժինն է համաձայն Տէր Յիսուսի Խօսքերուն, որ ըսաւ «Խաղաղութիւն կը թողում ձեզի, ի՛նչ խաղաղութիւնս կուտամ ձեզի, ո՛չ թէ ինչպէս աշխարհս կու տայ՝ ես ձեզի կու տամ: Սըրտերնիդ չխռովի ու չվախնայ» (Յովհ. 14:27): Սա խաղաղութիւն է, որը կը գտնենք միայն Իր մէջ: «Այս բաները ձեզի խօսեցայ, որպէս զի ինծմով խաղաղութիւն ունենաք. աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջասիրտ եղէք, ես աշխարհին յաղթեցի» (Յովհ. 16:33):

Խաղաղութիւն երկրի՞ վրայ: Անհաւատները կը ծաղրեն երկրի վրայ խաղաղութեան ու մարդկանց մէջ հաճութեան մասին Սուրբ Ծննդեան սլատգամը: Բայց օր մը պիտի գայ ճշմարիտ խաղաղութիւնը: Մինչեւ այդ ժամանակը գալը մենք Երանելիներուն մէջ ունինք այս խոստումը. «Երանի՛ խաղաղութիւն ընողներուն, վասն զի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին» (Մատթ. 5:9): Թող որ մենք ըլլանք խաղաղաբարներու շարքին մէջ:

Տոն Սքոբմըր

Գերիները

1. Այս վերջին կովում մեր Դարաբաղի,
Շատ արյուն թափվեց տեղի, անտեղի,
Ու խոսքը մեր մէջ ալանի, աղի,
Չլուծված հարցեր կան մինչև հիմի:

2. Ատելությունը երկու կողմում էլ
Մաստիկ էր այնքան, այնքան ահարկու,
Որ գերադասում էին մեռնել,
Քան թե հայտնվել ձեռքը թշնամու:
3. Տանջում, խոշտանգում էր թուրքը գերուն,
Լավ չէր վիճակը նաև թուրք գերու,
Մարդկանց սրտերին հին օճն էր տիրում,
Ու փափագ տալիս՝ ջնջել իրարու:
4. Եվ սկսվել էր մի մեծ առևտուր,
Թշվառ, անօգնական գերիների,
Կարծացրել, դարձել էին այրվող հուր,
Սրտերը մարդկանց որդիների:
5. Այսօր երկուսին են բաց թողնելու,
Կեղտն ու թնջուկը ոջլոտ մագերին,
Մի կողմում հյուծված հայն էր փոխվելու,
Ահա պատրաստ է և թուրք ագերին:
6. Մինչև ատամներն խմբերը զինված,
Երկու կողմերում հսկում լռածայն,
Նշված տեղերից, վայրկյանին նշված,
Պետք է շարժվեն դժբախտները այն:
7. Հազիվ քարշ տալով ծանրացած ոտքերն,
Դանդաղ քայլում են նրանք դեպի կյանք,
Նրանց ասված է, լավ պահեն մտքերն,
Կանգնելը մահ է, նայելը հանցանք:
8. Հանկարծ հայացքներն անձանոթների,
Լուռ հանդիպեցին բոլորի առաջ,
Եվ մոռանալով ցավը ոտների,
Վազեցին նրանք իրար ընդառաջ:

9. Երկնային մի ուժ գերբնական,
Մագնիսի նման մեկ մեկու ձգում,
Եվ փաթաթվեցին ճիշտ եղբոր նման,
Ինչպես հայրն է իր որդուն գրկում:
10. Գլուխներն իրար ուսերի գցած,
Ո՛նց են հեկեկում ու դառը լալիս,
Ծով են աչքերը վաղուց չորացած,
Հակոբն ու Եսապն են միտքս գալիս:
11. Լուռ հեծկլտում են մաս զինվորներն,
Մոռացած կարգը դաժան գործարքի,
Ու չեն ծլվում մույնիսկ թռչուններն,
Բողոք հայտնելով մարդկային վարքի:
12. Չկա՛, չի՛ եղել երբեք աշխարհում,
Ճարտասան մեկը, կամ հմուտ գրող,
Որ կարողանար այնքան բան ասել,
Որքան լռությունն այն խորհրդավոր:
13. Եվ ո՞րն է դասը այս լուռ քարոզի,
Ադամի մոլոր, չար որդիներիս,
Մարդն առանց Աստծո նման է խոզի,
Ապառաժ քար է սիրտը բոլորիս:
14. Եվ գերիները միմյանց թշնամի,
Սիրեցին իրար, բայց գիտե՞ք ինչու,
Մեկը մյուսով եղան կենդանի,
Փրկագին դարձան նրանք իրարու:
15. Իմ քաղցր Հիսուս, Դու իմ փրկագին,
Դու ճշմարիտ վեմ, Դու իմ ապավեն,
Քեզ վայել է փառք, պատիվ թանկագին,
Հավիտյաններից, հավիտյանս ամեն:

Գառնիկ Աբրեյան

Պատերազմ

Երեկուայ լուրը ծանր էր ընդունելը: Այն ինձ ստիպեց Աստուծոյ հարցեր տալ, ինչպէս Դաւիթը ըրաւ: Ինչո՞ւ այս պատերազմն այսպէս աւարտեց: Ինչո՞ւ ամբարիշտները կը բարգաւաճին, իսկ արդարները կը տառապին:

Առաւօտեան արեւածագին, երբ դեռեւս անկողնիս մէջ էի, ստացայ հարցերուս պատասխանը: Ես չեմ կրնար ըսել, որ Երկինքէն ձայն լսեցի, սակայն սրտիս մէջ շշուկ մը ունեցայ, որը զիս ստիպեց մտածել ու վերանայել աղօթքիս կէտերը:

Ես աղօթած էի՝ (1) պատերազմի աւարտի համար, (2) խաղաղութեան համար, (3) մեր ղեկավարներու վերին իմաստութիւն ստանալու համար, (4) քարացած սրտերը փշրուելու համար, եւ որ ղեկավարները չշարունակեն իրենց հպարտութեան մէջ մնալ, այլ իմաստութեամբ կառավարեն ժողովուրդը, եւ (5) որ Աստուծոյ կամքը կատարուի:

Ես պէտք է ըսեմ, որ Աստուած աղօթքները կը պատասխանէ: Իմ Երկնաւոր Հայրս վերոյիշեալ բոլոր խնդրանքները պատասխանեց: Պատերազմն աւարտեց, խաղաղութիւն հաստատուեցաւ, եւ Ան մեր ղեկավարներուն իմաստութիւն պարգեւեց:

4-րդ եւ 5-րդ խնդրանքներու վերաբերեալ կը պատկերացնեմ, որ ձեզմէ շատերը պիտի չհամաձայնին այն ամէնուն, ինչ պիտի ըսեմ: Սկիզբը ես ալ ձեզի պէս կը մտածէի:

Մենք հպարտ ազգ ենք, եւ մեր ցաւալի պատմութեան պատճառով մեր սրտերը քարացած են: Մենք կարծես թէ, աւելի շատ մտահոգուած ենք մեր հպարտութեամբ, քան մեր ժողովուրդով: Բայց Աստուած մտահոգուած է մարդկանցով: Ան չուրախանար մահով: Վարչապետ Փաշինեանի կատարած քայլը աղօթքի պատասխան էր: Ան ինքն իրեն խոնարհեցուց եւ իր ժողովուրդի բարութեան համար ընդունեց հրադադարի պայմանները ու չհետեւեցաւ իր հպարտութեանը:

Իսկ ինչ կը վերաբերի ընդդիմութեանը, Աստուած բոլոր ազգերու դատաւորն է, եւ ճիշտ ժամանակին եւ Իր կամքի համաձայն անոնք պիտի կանգնին Աստուծոյ բարկութեան առջեւ, եթէ դարձի չգան ու չփշրեն իրենց քարացած սրտերը:

Իսկ ինչ կը վերաբերի աղօթքիս վերջին կետին, ապա այս հակամարտության ելքի իմ փափագն էր Արցախն ամբողջությամբ ունենալը: Այնուամենայնիւ, իմ խնդրանքս այն էր, որ Աստուծոյ կամքը կատարուէր, եւ այդպէս ալ եղաւ: Ան գերիշխան է Իր բոլոր ստեղծագործութիւններու, կառավարութիւններու, իշխանութիւններու եւ ազգերու վրայ:

Այժմ աղօթքս մէկ կետի շուրջ կը դառնայ՝ որ մենք միաբան մնանք ու դադրեցնենք ներքին կռիւները: Այս պատերազմի ընթացքին մենք՝ սփիւռքի եւ հայրենիքի մէջ կը պնդեինք, որ մեր միակ յոյսը Աստուած է. արդեօք սա պարզապէս բանաւոր արտայայտութիւնն էր, թէ՞ իսկապէս սրտի անկեղծ խօսք: Եթէ կը պնդենք, որ քրիստոնեայ երկիր ենք, ապա պէտք է քրիստոնեական վարուիք: Եթէ այդպէս չընենք, ուրեմն բշտամին կը յաղթէ մեզ:

Որպէս քրիստոնեայ երկիր մենք պէտք է լոյսի փարոս ըլլանք մութ աշխարհին: Մենք պէտք է մեր վկայութիւնը բարձր պահենք:

Անառակ որդիի պէս մենք, որպէս ազգ՝ թէ՛ սփիւռքի մէջ եւ թէ՛ հայրենիքի մէջ, նախագահէն մինչեւ հասարակ քաղաքացին, պէտք է ապաշխարենք ու Աստուծոյ վերադառնանք: Թող Զրիստոսը նստի մեր կեանքի գահին: Թող որ Ան ըլլայ մեր Թագաւորը եւ այդ ժամանակ Ան բազմաթիւ օրհնութիւններ պիտի շնորհէ մեզ: Միայն այդ ժամանակ բշտամին պիտի պարտուի:

Յակոբ Ժաք Խաչոյեան

14,000 քմ

Աւտրալիայէն 14,000 քմ հեռաւորութեան վրայ պատերազմ է: Ազրպէյճանը յարձակուեցաւ Արցախահայութեան վրայ:

2006 եւ 2007 թուականներուն առիթ ունեցայ մի քանի շաբաթով այցելել այս գեղեցիկ վայրը, հանդիպիլ մարդկանց հետ, ժամանակ անցնել գիւղերուն մէջ, խաղալ տեղաբնակ մանուկներուն հետ ու սորվեցնել անոնց Աստուածաշունչի եւ Յիսուսի մէջ եղած յաւիտենական կեանքի յոյսի մասին:

Իւրաքանչիւր օր կը լսեմ վերջին հակամարտութեան լուրերը: Մտահոգուած եմ այս մարդկանց համար, այն մանուկներուն համար, որոնց այդ տարիներու ընթացքին հանդիպած եմ: Անոնցմէ շատերը այժմ այն տարիքի մէջ են, որ պատրաստ են իրենց տունները, ընտանիքները եւ հողը պաշտպանելու համար կռուելու. հող, որու վրայ իրենք աւելի երկար ապրած են, քան անոնք, որոնք ուժի լեզուով կ'ուզեն խլել այն:

Երեկ «NSW»-ի օրէնսդիր մարմինը ընդունեց Արցախի հանրապետութեան անկախութիւնը՝ 61:2 յարաբերակցութեամբ: Փաստաթուղթը նաեւ դատապարտեց բնիկ Արցախահայութեան դէմ Ազրպէյճանի ու Թուրքիայի սանձազերծած յարձակումները: Ես շատ շնորհակալ եմ մեր երկրի իշխանութեանը այդ անարդարութիւններուն դէմ խօսելու համար:

Պատերազմը մեծ գող է. այն կեանքեր կը խլէ՝ թողելով մեզ սարսափներու յիշողութիւնը, որուն ընդունակ ենք: Այն կը ցուցադրէ մարդկային սրտի սարսափելի չարիքներ գործելու ընդունակութիւնը ու կը յիշեցնէ մեզ կեանքի փխրունութեան ու մահուան վշտի մասին:

Ես կ'աղօթեմ խաղաղութեան, արդարութեան եւ պատերազմի աւարտի համար: Բայց այս կեանքին մէջ ոչ մէկ խոստում կայ, որ կարելի է հասնել ատոնց: Մարդկային իմաստութիւնն այնքան թերի ու սահմանափակ է, որ նոյնիսկ ամենահանճարեղ մտքերն ու սրտերը չեն կրընար կատարեալ արդարութիւն ապահովել այս ահաւոր իրավիճակին մէջ: Քանի որ նոյնիսկ եթէ ռումբերը չպայթին ու զենքերը լռեն, միեւնոյն է, կան գոհուածներ, որոնց պէտք է հողին յանձնել: Եվ ո՞վ անոնց արդարութիւն պիտի տայ:

Կայ միայն մէկ Անձ, ով կարող է. Ան է, ով ոչ միայն մահացաւ, այլեւ յարութիւն առաւ: Միայն Աստուծոյ կատարեալ Որդին՝ Յիսուս Քրիստոսը կրնայ տեսական արդարութիւն եւ խաղաղութիւն բերել:

Ան այնպիսի արդարութիւն կը բերէ, որը ճշմարիտ է, որը չի սակարկուիր, փոխզիջման չի ենթարկուիր կամ լռեցուիր: Այն արդարութիւն է, որը կը քննէ ու երեսան կը հանէ իւրաքանչիւր անձի սրտի խորհուրդները: Այն սարսափելի, կատարեալ արդարութիւն է: Ես չէի ուզէր հանդիպիլ այդ արդարութեանը, քանի որ գիտեմ, որ սիրտս մեղքի խորունկ ջրհոր մըն է. յաճախ եսասիրութիւն, զայրոյթ եւ ատելութիւն պահած եմ այնտեղ:

Խաղաղութիւն նոյնպէս կայ: Խաղաղութիւն, որը կը գերազանցէ այս պատերազմը, այս կեանքն ու մահը: Այն Հայր Աստուծոյ հետ խաղաղութիւն է: Այն հասանելի է բոլորին՝ տղամարդկանց, կանանց եւ մանուկներուն, բոլոր անոնց, որոնք Քրիստոսին կը դիմեն, որպէս Տէր:

Ուստի կ'աղօթեմ Աստուծոյ արդարութեան համար, քանի որ այն ճիշտ է: Կ'աղօթեմ Աստուծոյ ողորմութեան համար, քանի որ առանց ատոր ես իմ կողքիս եղող մարդու նման մեղաւոր եմ: Նաև կ'աղօթեմ խաղաղութեան համար, որպէսզի այս հակամարտութեան երկու կողմներուն իւրաքանչիւր տղամարդ, կին ու մանուկ ճաշակէ Հայր Աստուծոյ տեւական խաղաղութիւնը, որը մեզի հասաւ Իր Որդիի ցուցաբերած ողորմութեան շնորհիւ: 2000 տարի առաջ, այս աշխարհը ակամատես եղաւ ռազմական ամենամեծ յանցագործութեանը, մարդկութիւնը բացայայտեց իր մեղաւոր սրտի խորութիւնը, երբ հեռացաւ Աստուծմէ ու սպանեց Իր Որդին: Եւ Աստուած թոյլ տուաւ, որ այն տեղի ունենայ, ոչ թէ այն պատճառով, որ անգոր էր, այլ քանի որ այս մեծագոյն չարագործութեան շնորհիւ մենք պիտի ճաշակէինք մեր յաւիտենական Աստուծոյ մեծագոյն խաղաղութիւնը:

Կը խնդրեմ աղօթեցէ՛ք խաղաղութեան, արդարութեան եւ պատերազմի աւարտի համար, եւ որ շատ երկիրներ հետեւին «NSW»-ի խորհրդարանի եւ այլ ազգերու օրինակին, ովքեր դատապարտեցին Արցախի Ժողովուրդի նկատմամբ գործուած անարդարութիւնները: Աղօթեցէ՛ք նաեւ մարդկանց համար, որպէսզի իւրաքանչիւրը Յիսուսի մէջ Աստուծոյ յաւիտենական խաղաղութիւնը գտնէ:

Դաւար Խաչոյեան

Պատերազմի սպիներ

Ամեն օր փախստականներու մեծ հոսք կուգայ Արցախէն դէպի Հայաստան:

«Հայ քրիստոնէական առաքելութիւն»-ը Աւստրալիոյ, ԱՄՆ-ի եւ Հայաստանի մէջ գրանցուած մարդասիրական կազմակերպութիւն է:

Անոր հաշուեհամարները պարբերաբար հաշուեքննութեան կ'ենթարկուին տարբեր կառավարութիւններու կողմէ:

Վերջին 22 տարիներու ընթացքին «ԱՄՄ»-ն նուիրուած էր Հայաստանի աղքատներուն եւ կարիքատուրներուն օգնութիւն ցուցաբերելու համար: Այսօր շատ փախստական ընտանիքներ կը դիմեն մեզի օգնութեան եւ աջակցութեան համար:

Դիւրին չէ տեսնել պատերազմի սպիները մեծ մայրերու, մայրերու եւ մանուկներու վրայ, որոնք պատերազմական գօտիին մէջ թողած են իրենց որդիներուն, ամուսիններուն, հայրերուն ու մեծ հայրերուն: Անոնք դաճաղներով կամ վերջոյթներու կորուստով կը վերադառնան: Շատերը ամէն ինչ կորսնցուցած են:

Մենք որպէս «ԱՄՄ» ոչ միայն նիւթական օգնութիւն կը ցուցաբերենք, այլեւ հոգեւոր օգնութիւն, յոյս կը ներշնչենք անոնց, որոնք կորսնցուցած են իրենց ունեցուածքը: Ոմանք վերադառնալու տեղ չունին:

Աւստրալիոյ համայնքի աջակցութեամբ կարողացանք ծածկոցներ, հագուստներ, սնունդ եւ մանուկներու համար դպրոցական պարագաներ ու խաղալիքներ տրամադրել:

Այժմ հրատապ կ'աշխատինք Հայաստան եւս մէկ բեռնարկդ ուղարկել՝ փախստականներուն բաժնելու համար: Դուք նոյնպէս կրնաք նիւթապէս օգնել կատարելով մէկ անգամեայ նուիրատուութիւն կամ

- հովանաւորել մէկ փախստական ընտանիք՝ ամսական նուիրելով \$150.00 ԱՄՆ տոլար, կամ
- օգնելով սնունդի ծանրոցներ տրամադրել: Մէկ ամսուայ համար \$50.00 ԱՄՆ տոլարը բաւարար է մէկ ընտանիքի սնունդով ապահովելու համար:

Ձեր աջակցութիւնն ու օգնութիւնն այսօր խիստ անհրաժեշտ են: Դուք կարող էք ձեր նուիրատուութիւնը կատարել մեր կայքի միջոցով www.acmaust.org կամ հետեւեալ մէյլի հետ կապ հաստատելով info@acmaust.org:

«ԱՄՄ»